

Դասընթացի անվանումը՝	«Ապացույցներ ներկայացնելու պարտականությունը և ապացուցման բեռի բաշխման կանոնների առանձնահատկությունները վարչական դատավարությունում»
Տևողությունը՝	16 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

*Դասընթացը նախատեսված է վարչական դատարանի, վարչական վերաքննիչ դատարանի, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:*

Դասընթացը նվիրված է վարչական դատավարությունում ապացուցման բեռը կողմերի միջև բաշխելու, ապացույցներ ներկայացնելու, դրանց հետազոտմանը չխոչընդոտելու պարտականությունների կատարման հետ կապված հիմնախնդիրների քննարկմանը: Դասընթացի ընթացքում քննարկվում են մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Վարչական դատարանի կողմից վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, պահանջելու և կողմերին անձամբ դատական նիստի ներկայանալու հանձնարարություն տալու իրավասությունը, դրա իրականացնելու կարգը և սահմանները:
- Ապացույցների հետազոտման առարկան՝ ապացուցում պահանջող փաստերի շրջանակը պարզելը, դրանք դատարանի կողմից վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերով լրացնելը և կողմերի միջև ա-

պացուցման բեռը բաշխելը որպես գործը դատաքննութ-  
յանը նախապատրաստելու փուլի խնդիրներ:

- Դատաքննության յուրաքանչյուր փուլում նոր փաստերի  
ապացուցում պահանջելու վարչական դատարանի իրա-  
վաստությունը, դրա իրականացման կարգն ու սահմանները:
- Վարչական դատավարությունում ապացուցման պարտա-  
կանությունը, ապացուցման բեռը բաշխելու կանոններն ու  
առանձնահատկությունները:
- Ապացույցներ ներկայացնելու կողմի պարտականությունը,  
վարչական մարմնի պարտականությունը, ապացուցման բեռը  
կրելը, վիճելի մնացած փաստի հետևանքները և այն կրող  
կողմը:
- Ապացույցը չթաքցնելու, դրա հետազոտմանը չխոչընդոտելու  
կողմի պարտականությունը: Ապացույցը թաքցնելու կամ դրա  
հետազոտմանը խոչընդոտելու հետե- վանքները:
- Ապացուցման ոչ ենթակա փաստեր: Դատարանի կողմից  
հանրահայտ ճանաչված փաստերը: Նախադատելի փաս-  
տեր. հասկացությունը, նախադատելիության սուբյեկտիվ և  
օբյեկտիվ սահմանները, նախադատելիությունը բացառող  
հանգամանքները: Անվիճելի փաստերի հասկացությունը:

***Դասընթացը վարում է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի  
նախագահ Հովսեփ Բեդկյանը:***